Ֆ 604 Ֆ 1 Ա
Ա 463 ա

ԲԼԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
„ՍՈՅՈՒԶԽԼԵՐ“
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

# ԱՂՈՒՆԱՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԱՆԴՐԱՌԵՎՏՐԻ ԺՈՂԿՈՄԱՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԻԱԶՈՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՑԵՐԵՎԱՆ 1929

V

ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
„ՍՈՅՈՒԶԽԼԵՐ“
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

380.17:63
A 4169
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# ԱՂՈՒՆԱՎԱՐՁՈՒ ՄԱՍԻՆ

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿ.ՀԱՅԿԱԿԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԱՆԴՐԱՌԵՎՏՐԻ ԺՈՂԿՈՄԱՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԻԱԶՈՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 1929

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ
ԳՐԱՌԵՊԳԼԽՎԱՐ № 2840 Բ.
ՊԱՏՎԵՐ № 505 ՏԻՐԱԺ 250

# ՀՐԱՀԱՆԳ

## 1929-30 ԹՎԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՂՈՒՆԱՎԱՐՁԸ ԳԱՆՁԵԼՈՒ, ՊԱՀԵԼՈՒ ՅԵՎ ՈԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հրատարակված է ՍԽՀՄ ԿԳԿ յեվ ԺԿԽ 1926 թ. հուլիսի 17-ի, աղունավարձի մասին վորոշման 11-րդ կետի հիման վրա

## ՀԱՏՎԱԾ I.

## ԱՂՈՒՆԱՎԱՐՁԻ ԳԱՆՁՈՒՄԸ ՅԵՎ ՀԱՆՁՆՈՒՄԸ

*1. ՍԽՀՄ տերիտորիայի վրա գտնվող բոլոր աղայները, ձիթհան գործարանները և ձիթհան արդյունաբերության այլ ձեռնարկությունները պարտավոր են աղունն աղալու, յուղասերմերը վերամշակելու վարձը գանձել բացառապես բնանյութով (աղունավարձ)։*

*Այդ կանոնները տարածվում են քաղաքներում, քաղաքատիպ և գյուղական վայրերում գտնվող պետական, կոոպերատիվ հիմնարկություններին և կազմակերպություններին պատկանող, այլ և մասնատիրական և կապալով վերցրած վերը նշված բոլոր ձեռնարկությունների վրա, անկախ նրանց տեխնիկական սարքավորումից։*

2. Աղունավարձը բնանյութով վճարելու պարտականությունից ազատվում են այն պետական և կոոպերատիվ հիմնարկությունները ու կազմակերպությունները, վորոնց պատկանող աղված աղունը և վերամշակված յուղասերմերը ծախսվում են ըստ Միութենական Առևտրի պլանի։

Աղունավարձը բնանյութով վճարելու պարտականությունից ազատվող կազմակերպությունների ցանկը սահմանում են դաշնակից հանրապետությունների Առևտրի կոմիսարները։

Այդ կարգին դասվող կազմակերպություններից աղունավարձը գանձվում է դրամով դաշնակից հանրապետությունների Առևտրի կոմիսարների կողմից սահմանված չափով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—1. Զինվորական հիմնարկությունները ազատվում են աղունավարձը բնանյութով վճարելու պարտականությունից։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—2. Մասնավոր աղացատերերին և կապալառուներին պատկանող աղունն աղալու և յուղասերմերը վերամշակելու վարձը գանձվում է բնանյութով, ընդհանուր հիմունքներով, չնայած այնպիսի դասված չեն 2-րդ կետում հիշված կազմակերպությունների կարգին։

3. Աղունավարձի նորմաները (կիլոգրամներով՝ մեկ ցենտեր աղացվող աղունից և վերամշակվող յուղասերմերից) սահմանվում են ՍԽՀՄ մեջ մտնող Հանրապետությունների կառավարությունների կողմից՝

կամ նրանց հանձնարարությամբ տեղական մարմինների կողմից։ Վերջին դեպքում աղունավարձի նորմաները կարող են սահմանել միայն յերկրային և վիճակային գործկոմները։

Տվյալ յերկրի կամ վիճակի (նահանգի) տնտեսական պայմանները զանազան լինելու դեպքում, վերը նշված գործկոմներին իրավունք և վերապահվում սահմանել աղունավարձի նորմաներն ըստ առանձին մարզերի (գավառների), ըստ վորում աղունավարձի նորմաները սահմանվում են ամեն մեկ տեսակի ձեռնարկությունների համար առանձին (մեխանիկական աղաց, ջրաղաց, քամու ուժով աշխատող աղաց) և ըստ կուլտուրաների։ Մեխանիքական աղացների և այլ աղացների համար սահմանված նորմանելի տարբերություն, ըստ կարելույն պիտի լինի մինիմալ, վորպեսզի մեխանիքական աղացների նորմալ բեռնվածությունը ապահովված լինի։

Համայնացված սեկտորի ձեռնարկություններում, աղունավարձի նորմանները. համենայն դեպս չպիտի լինեն աղունն աղալու և յուղասերմերի վերամշակման ինքնարժեքից ցածր, հաշվելով նաև առևտրական շահը։

Սահմանված աղունավարձի նորմանները պարտադիր են բոլոր պետական, կոոպերատիվ կազմակերպություններին, խորհրդային և կոլեկտիվ տնտեսություններին և մասնավոր անձանց պատկանող աղացների և ձիթհան գործարանների համար։

Աղունավարձի նորմանները հրապարակվում են ի

գիտություն ընդհանուրի և վակցվում են շրջագրծկումներում, գյուղխորհուրդներում, աղացներում և հացամթերող կազմակերպությունների մթերման կայաններում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Սահմանագծում, վոչ պակաս 30 կիլոմետր հարևան շրջանների սահմաններից աղունավարձի նորմաները սահմանվում են հարևան շրջաններում գոյություն ունեցող նորմաների միջին թվաբանական մեծության համաձայն։

Սահմանագծի համար աղունավարձի նորմաները սահմանելիս առաջ ելնող թյուրիմացությունները լուծվում են առանձին հանրապետությունների Առևտրաների կողմից, իսկ դաշնակից հանրապետությունների սահմաններում — Միութենական Առևտրի կողմից։

4. Աղունավարձը, աղացատերերի և կապալառուների կողմից. աղունի և յուղասերմերի տերերից գանձվում և բնանյութով, մինչև աղունի աղալը և յուղասերմերի վերամշակելը։

Աղունավարձը պետք գանձվի միմիայն այն կուլտուրայով, վոր հանձնվում և աղալու կամ վերամշակելու. Աղունավարձը ուրիշ կուլտուրայով փոխարինել չի թույլատրվում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Այն դեպքերում, երբ աղալու համար հանձնվում և գանազան կուլտուրաների խառնուրդ, աղունավարձը գանձվում և խառնուրդի, վորևե մի կուլտուրայով։

5. Աղացների և ձիթհան գործարանների կողմից գանձվող ապունավարձի ամբողջ գանակը պիտի հանձնվի ուշն հրահանգի 14-րդ կետում նշված ընդունման կայաններին:

Այդ նպատակով. ձեռնարկությունների տերերը, և կապալառուները պարտավոր են իրենց հաշվին և իրենց միջոցներով ու իրենց փոխադրել գանձված ապունավարձը, ընդունման կայանները վոչ ուշ ծանուցագրերում ցույց տված ժամկետներից, չբերելով իրենց մոտ ապունավարձը.

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. 1. Ապունավարձի մասին սահմանված կանոնների չկատարելը, մասնավորապես հանձնման ժամկետները խախտելու համար, զանցառուների նկատմամբ գործադրվում և նախատեսված սանկցիան:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 2. Ձեռնարկությունների տերերին և կապալառուներին արգելվում է գանձված ապունավարձը գործադրել իրենց սեփական կարիքների համար կամ տվյալ ձեռնարկության բանվորների կարիքները բավարարելու համար:

6. Իրեն կանոն, աղացների և ձիթհան ձեռնարկությունների տերերը և կապալառուները պարտավոր են իրենց կողմից գանձված ապունավարձը հանձնել հացահատիկով կամ յուղասերմով,

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—1. Պետական և կոոպերատիվ կազմակերպություններին պատկանող այն աղացները, վորոնք ապուն ապում են ըստ

Առևկոմի կամ նրա տեղական մարմինների կողմից վորոշված ստանդարտի, իրավունք ունեն աղունաստեղերից գանձված աղունավարձը հանձնել վերամշակված դրությամբ, բացառապես վորոշված վորակի և ստանդարտի պրոդուկցիայով։ Այդ ապացույցների ցուցակը կազմվում է տեղական, վոչ ցածր յերկրային կամ վիճակային, առևտրական բաժինների կողմից։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. 2. Ցուղասերմերից գանձված աղունավարձը վերամշակված դրությամբ (յուղ, քուսպ և այլն) հանձնելու իրավունքը վերապահվում է միմիայն Ժ. Տ. Գ. Խ. սինդիկատացված պետական ձիթհան արդյունաբերության և հիմնական հացամթերող կազմակերպություններին, վորոնք ՍԽՀՄ Առևկոմի կողմից մտցված արտադրողական ծրագրի մեջ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. 3. ՍԽՀՄ Առևկոմի արտադրողական ծրագրի մեջ չմտցված ԺՏԳԽ սինդիկատացված ձիթհան արդյունաբերության, տեղական արդյունաբերության, գյուղատնտեսական և սպառողական կոոպերացիայի ձիթհան գործարանները, այլ և մասնաստիրական և մասնավոր անձանց կողմից կապալով վերցրված ձիթհան գործարանները, պարտավոր են աղունավարձը հանձնել բացառապես յուղասերմերով։

7. Հացահատիկով և յուղասերմերով հանձնված աղունավարձի արժեքը, վճարվում է ընդունման կայանների կողմից, տվյալ կայանի համար սահմանված մթերման կոնվենցիոն գներով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ։ — Պետական և կոոպերատիվ կազմակերպությունների կողմից աղունավարձը վերամշակված դրությամբ հանձնելու դեպքում, հաշվարկումը կատարվում է պատրաստի պրոդուկցիայի համար սահմանված մթերման կոնվենցիոն գներով. Այն դեպքերում, երբ պատրաստի պրոդուկցիայի համար մթերման կոնվենցիոն գներ սահմանված չեն, հաշվարկումը կատարվում է հացահատիկների համար սահմանված մթերման գներով, ավելացնելով դրա վրա վերամշակման վաստակի արժեքը։

8. Բացի 7-րդ կետում հիշված մթերման կոնվենցիոն գներից, աղունավարձը հանձնող ձեռնարկությունները լրացուցիչ ստանում են.

ա) Անմիջականորեն աղացների ելևատորները և չիթհան գործարանները հանձնելիս (եթե այդպիսիք հանդիսանում են աղունավարձի ընդունման կայաններ) այդ ձեռնարկությունների համար սահմանված լրացուցիչ արժեքը։

բ) Աղունավարձը վագոններով հանձնելիս (եթե այդ նախատեսված է ծանուցագրով կամ եթե թույլատրված աղունավարձի շրջանային հսկիչի կողմից) — 18 կոպեկ ամեն մեկ ցենտների համար։

գ) Ծանուցագրերի մեջ ցույց տված ժամկետներին աղունավարձ հանձնող պետական և կոոպերատիվ ձեռնարկությունները բացի վերոհիշյալ լրացուցիչ արժեքից ստանում են՝ կայարաններին և նավահանգստներին կից ձեռնարկությունները, ամեն մեկ

ցենաների համար 18 կոպ., իսկ մնացած ձևնարկությունները, ամեն մեկ ցենտների համար 24 կոպեկ։

## ՀԱՏՎԱԾ 2.

## ԱՂՈՒՆԱՎԱՐՁԻ ՀԱՎԱՔԵԼԸ ՅԵՎ ԸՆԴՈՒՆԵԼԸ

9. ՍԽՀՄ ամբողջ տերիտորիայի վրա ապունավարձի հավաքելու գործը դրվում է «Սոյուզխլեբ» բաժնետիրական ընկերության վրա։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Ապունավարձի հավաքելու գործը «Սոյուզխլեբ»-ի հանձնարարությամբ իրագործում է՝ Միջին Ասիայում՝ Ազիախլեբը, իսկ ՌՍՖՍՀ արտադրող առանձին նահանգներում կոոպերացիայի կամ պետականակերպությունների կողմից։ Այդպիսի «Սոյուզխլեբ»-ը կնքում է համապատասխան պայմանագրեր Ազիախլեբի և կոոպերացիայի նահանգական միությունների կամ պետականակերպությունների հետ։ Սակայն բոլոր այդ դեպքերում ապունավարձի հավաքման ոպերացիաների պատասխանատվությունը մնում է Սոյուզխլեբի վրա։

10. Իբրև կանոն, Սոյուզխլեբը, ինչպես իր աշխատակիցներից, այնպես էլ հատուկ աշխատակիցներ հրավիրելով, կազմակերպում է ապունավարձի շրջանային հակիչների ինստիտուտ, կցելով նրանց առանձին շրջագծերին։

Այդ հակիչների աշխատավարձը, այլ և գրասենյակային և գործուղումների հետ կապված և այլ ծախսերը հոգում է Սոյուզխլեբը։ Մարզային առևտրական

բաժիններին կամ համապատասխան կարգավորող մարմինների թույլտվությամբ՝ թույլատրվում է ունենալ մեկ հակիչ յուրաքանչյուր, կամ մի քանի, քիչ ձեռնարկություններ, կամ ցածր արտադրողականություն ունեցող շրջաններում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Այն ինքնավար հանրապետություններում և նահանգներում, որտեղ գոյություն ունեն վոլոստները շրջանային հակիչը կարող ստատարկել մի քանի վոլոստներ, ըստ որում այդ վոլոստների միացումը կատարում է Սոյուզխլեբը, համաձայնեցնելով համապատասխան առևտրական բաժինների հետ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. ՌՍՖԽՀ ապառող գոտում, ԱՍՖԽՀ, Թուրքմենստանի ՍԽՀ և Ուզ. ՍԽՀ Առևտրամների թույլտվությամբ, Սոյուզխլեբը կարող է շրջանային հակիչների փոխարեն ունենալ մարզային կամ գավառային հակիչներ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Մյուսյան այն վայրերում, որտեղ գոյություն ունեն սույն հրահանգի 9-րդ կետի ծանոթության մեջ հիշված համաձայնությունները, ապունավարձի շրջանային հակիչների ինստիտուտը կազմակերպվում է կոոպերատիվ և պետական կազմակերպությունների կողմից, իրենց հաշվին։

11. Շրջանային հակիչը, գյուղխորհուրդների միջոցով, հաշվի է առնում իր շրջանի ապացները և ձիթհան գործարանները, հայտնաբերելով նրանց սարքավորումը և արտադրողական ունակությունը։

Այդ նպատակով կատարվում է տվյալ շրջանի բոլոր ձեռնարկությունների հետազոտություն։ Մասնավորապես մեխանիկական սարքավորում ունեցող ձեռնարկությունների հետազոտումը կատարում է անձամբ շրջանային հսկիչը կամ նրա կողմից լիազորված ուրիշ անձնավորությունները.

Մանր ձեռնարկությունների և քամու ուժով աշխատող ագրեգատների հետազոտությունը սահմանափակվում է գյուղխորհուրդների տվյալներով։

Վորպեսզի ագրեգատների և ձիթհան գործարանների հաշվառումը մաքսիմալ չափով լինի լրիվ, հետազոտությունների տվյալները ստուգվում են ֆին-մարմինների մոտ եղած արհեստագործական (խոշոր ձեռնարկությունների նկատմամբ) և գյուղատնտեսական (մանր ձեռնարկությունների նկատմամբ) հարկերի տվյալներով։

12. Բացի արտադրողական ունակության մասին տվյալների հավաքելը, վորոշվում է նաև տվյալ ձեռնարկության հնարավոր բեռնվածությունը։ Բեռնվածությունը վորոշելու համար հաշվի են առնվում հետևյալ մոմենտները՝

ա) Ձեռնարկության կից շրջանի բերքի դրությունը.

բ) Տվյալ շրջանի ձեռնարկությունների թիվը և նրանց արտադրողական ունակությունը, և

գ) այլ մոմենտները, վորոնք նպաստում են տվյալ ձեռնարկության աշխատանքների ուժեղացման կամ թուլացման։

13. Ձեռնարկության արտադրողական ունակության և հնարավոր բեռնվածության մասին յեղած տվյալների հիման վրա, այլ և տվյալ շրջանի համար սահմանված աղունավարձի նորմաների հիման վրա, շրջանային հսկիչը վորոշում և ամեն մեկ ձեռնարկության կողմից, մեկ տարվա ընթացքում հանձնվելիք աղունավարձի մինիմալ չափը։

Շրջանային հսկիչը ներկայացնում և համապատասխան մարզային տեսչական բաժնին ի հաստատություն ձեռնարկությունների ցուցակը, ցույց տալով նրանց արտադրողական ունակությունը, հնարավոր բեռնվածությունը, և հանձնվելիք աղունավարձի վորոշված չափը։ Առևտրական բաժինները պարտավոր են մեկ շաբաթվա ընթացքում հաստատել այդ ցուցակները կամ մտցնել նրանց մեջ անհրաժեշտ փոփոխությունները։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Ձիթհան ձեռնարկությունների կողմից հանձնվելիք աղունավարձի չափը շրջանային հսկիչը վորոշում և սինդիկատացված յուղարդյունաբերության ներկայացուցչի հետ միասին։

14. Առևտրական բաժինների կողմից հաստատված ցուցակների հիման վրա, շրջանային հսկիչն ուղարկում և իր շրջանի ամեն մեկ աղացին և ձիթհան գործարանին հատուկ ծանուցագիր, գյուղատնտեսական տարվա ընթացքում նրանց կողմից հանձնվելիք աղունավարձի մասին, մանրամասն կերպով ցույց տալով, թե վորքան աղունավարձ պիտի հանձնի տվյալ

ձեռնարկությունը, ինչ կուլտուրաներով և վոր ամսին վորքան։ Բացի այդ ծանուցագրի մեջ պիտի ցույց տալ աղունավարձի հանձնման ժամկետները ամեն մի ամսվա համար առանձին և վոր ընդունման կայանը պիտի հանձնի աղունավարձը տվյալ ձեռնարկությունը։

Այս ծանուցագրերը կազմվում են չորսք (3) որինակից, վորոնցից մեկը շրջանային հսկիչը հանձնում և ձեռնարկության տիրոջն կամ կապալառուին, չորրորդը՝ ուղարկվում և ընդունման կայան, իսկ չորրորդը՝ արմատը, մնում և շրջանային հսկիչի գործերում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. 1. Պետական, գյուղատնտեսական և սպառողական կոոպերատիվ կազմակերպություններին պատկանող ձեռնարկություններին, վորոնք ունեն հաշվապահություն, ծանուցագրի մեջ հանձնվելիք աղունավարձի չափը ցույց և տրվում որիենտիր կերպով։ Այդ ձեռնարկությունների կողմից աղունավարձը հանձընվում և համաձայն աղված աղունի և վերամշակված յուղասերմերի մասին չեղած հաշվապահական տվյալների։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. 2. Ձեռնարկությունները ընդունման կայաններին կցելիս, պիտի հաշվի առնել ձեռնարկության և ընդունման կայանի մեջ չեղած տարածությունը և տնտեսական հարումը, անկախ վարչական սահմաններից։

15, Ծանուցագրերը հանձնելիս, ձեռնարկությունը-

ների տերերից և կապալառուներից (իսկ պետական և կոոպերատիվ կազմակերպություններին պատկանող ձեռնարկություններից — նրանց ղեկավարներից) պիտի վերցնել ծանուցագրերը ստանալու մասին ստացական, որի մեջ նշված պիտի լինի թե յերբ և ստացվել այդ-պիսին (տարին, ամիսը և ամսաթիվը)։ Ստացականները կցված են լինում ծանուցագրերին։

Այն դեպքերում, յերբ ձեռնարկությունների տերերը կամ կապալառուները հրաժարվում են ընդունել ծանուցագրերը կամ ծանուցագրերը ստանալու մասին չեն տալիս ստացական; այդպիսին հանձնողը այդ մասին կազմում և համապատասխան արձանագրություն, վկաների մասնակցությամբ։

Ձեռնարկությունների տերերի կամ կապալառուների կողմից ծանուցագիրը ստանալու մասին տրված ստացականը և վերը նշված արձանագրությունը պահվում են շրջանային հսկիչի գործերում։

16. Հանձնվելիք աղունավարձի որոշված չափի, հանձնման ժամկետների դեմ, այլ և աղունավարձը ըստ ամիսների և ըստ կուլտուրաների բաշխելու դեմ, գանգատները տրվում են դաշնակից հանրապետությունների կառավարությունների կողմից սահմանված կարգով, ըստ որում ձեռնարկությունների տերերի և կապալառուների գանգատների շտապ քննությունը ապահովված պիտի լինի։

Այն դեպքերում, յերբ հանձնվելիք աղունավարձի չափը, հանձնման ժամկետները և ըստ ամիսների ու ըստ կուլտուրանների բաշխումը փոփոխվի, շրջա-

նային հսկիչը, համաձայն պատշաճ մարմինների վորոշման, համապատասխան փոփոխություններ և մըցնում ծանուցագրերի մեջ, ցույց տալով այդ առթիվ կայացած վորոշման համարը և ժամանակը ու կատարված փոփոխությունների մասին իրազեկ և դարձնում համապատասխան ընդունման կայանները։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այն դեպքերում, երբ ձեռնարկությունների տերերը և կապալառուները սահմանված ժամկետներին վոչ մի գանգատ չին տվել և հրաժարվում են հանձնել աղունավաճը, այդպիսին գանձվում և նրանցից հարկերի գանձման կարգով։

17. Հանձնվելիք աղունավարձի չափի դեմ գանգատ տալը չի կասեցնում նրա գանձումը։ Եթե համապատասխան մարմինների վորոշմամբ աղունավարձի վորոշված չափը իջեցվում և, այդ դեպքում ավել գանձված աղունավարձը հաշվի չե առնվում հետագա գանձումների ժամանակ։

18. Պետական, գյուղատնտեսական և սպառողական կոոպերատիվ կազմակերպություն. պատկանող այն ձեռնարկություններին, վորոնք ունեն հաշվապահություն, սուրն հրահանգի 14-րդ կետում հիշված ծանուցագիրն ուղարկելիս նրա մեջ հանձնման յենթակա աղունավարձի չափը ցույց և տրվում որիենտիր կերպով, նկատի ունենալով, վոր այդ ձեռնարկությունները, աղունավարձը պիտի հանձնեն ըստ իրենց հաշվետու տրվյալների։ Այդ ձեռնարկությունների հաշվապահական գրքերում աղունի աղալու և յուղաներների վերամշա-

կելու հաշիվները պիտի տարվեն առանձին, ցույց տալով աղունի և յուղասերմերի տերերի անուն-ազգանունը ու նրանցից գանձված աղունավարձի քանակը։

Այս հրահանգի 2-րդ կետում հիշված կազմակերպությունների աղունը ազատվում է աղունավարձից։

Յուղասերմերը վերամշակելու և աղունն ազատելու ամբողջ հաշվետվությունը ձեռնարկությունները պարտավոր են առանց վրեպ արգելքի, ներկայացնել Սոյուզխլեբի շրջանային հսկիչներին, կամ այն անձանց, որոնք Սոյուզխլեբի կամ նրա շրջանային հսկիչների կողմից լիազորված կլինեն հետաքրքրելու այդպիսին։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—1. Պարտադրման ենթակա չեն միայն պետական և կոոպերատիվ կազմակերպություններին պատկանող կենտրոնացված այլուրարդյունաբերության ձեռնարկությունները և սինդիկատացված ձիթհան արդյունաբերության խոշոր գործարանները, այլ և հիմնական հացամթերող կազմակերպություններին պատկանող ձեռնարկությունները, որոնք հացահատիկների և յուղասերմերի վերամշակումը կատարում են համաձայն ՍԽՀՄ Առևտրի ոգտագործման կենտրոնացած պլանի։ Այդ ձեռնարկությունների ցուցակը կազմվում և դաշնակից հանրապետությունների Առևտրի կոմիսարիատների կողմից։ Այդ ցուցակում նշված ձեռնարկություններ-

ՀՍՍՌ ԳԻՏ ԻՖ ԵՎ. ՆԻՐԴ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
Ա. ԴԵՄԻՆ



15703 A I/4169

ին, աղունավարձը հանձնելու մասին, ծանուցագրեր չեն ուղարկում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. 2. Այլ պետական և կոոպերատիվ կազմակերպություններին պատկանող ձեռնարկությունների հետ միասին, հավասար հիմունքներով աղունավարձով պարտադրվում են արհեստների մեջ մտնող կամ չմտնող խորհրդային տնտեսություններին պատկանող ագայները և ձիթհան գործարանները, ըստ որում հանձման ցենթակա աղունավարձի չափը վերջնական դուրս և գցվում աղունի այն քանակը, որը աղվում և ավյալ խորհրդային տնտեսությունը կողմից իր սեփական կարիքների համար համաձայն Սովիկոմի տեղական մարմինների կողմից հաստատված պլանի։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. 3. Խորհրդային տնտեսությունների համար սահմանված կարգով (18-րդ կետ 2-րդ ծանոթություն) աղունավարձը հանձնող կոլեկտիվ տնտեսությունների ագայները և ձիթհան ձեռնարկությունների ցուցակը սահմանվում և վոչ ցածր, քան մարզային առևտրական բաժինների կողմից։ Նշած ցուցակի մեջը չմտնող կոլեկտիվ տնտեսությունները պարտավոր են աղունավարձը հանձնել ծանուցագրերի մեջ ցույց տրված չափով և կարգով, այսինքն այդ կոլեկտիվ տնտեսությունների վրա չի տարածվում 18-րդ հոդվածը։

19. Աղացներից և ձիթհան գործարաններից ստացված ընդունում են ընդունման կայանները, ըստ վորում այն շրջաններում, վորտեղ կան Սոյուզխլեբին պատկանող աղացներ, ելևատորներ և ընդունման կայաններ, այդ պարտականությունը դրվում է նրանց վրա։ Այն շրջաններում, վորտեղ Սոյուզխլեբը չունի ընդունման կայաններ կամ յեղած ցանցը չի կարող ընդգրկել բոլոր ձեռնարկությունները, Սոյուզխլեբը, կոմիսիոն հիմունքներով, այդ գործը հանձնարարում և կոոպերացիայի և պետական կազմակերպությունների ստորին կետերին, կնքելով նրանց հետ համապատասխան պայմանագրեր։ Կոոպերատիվ կետերի ցուցակը Սոյուզխլեբը համաձայնեցնում է կոոպերացիայի համապատասխան մթերությունների (միջին ղեկների) հետ։ Կոոպերացիայի ստորին կետերը և պետական կազմակերպությունները պարտավոր են վերցնել իրենց վրա Սոյուզխլեբի հանձնարարությունները և անշեղ կատարել նրա ցուցմունքները աղունավարձի հավաքման և ընդունման ասպարիզում։

Սոյուզխլեբի ֆիլիալների և կոոպերացիայի ու պետական կազմակերպությունների ընդունման կետերի միջև, ձեռնարկությունների տերերից և կապալառուներից հավաքած աղունավարձի համար հաշվարկումը կատարվում է տվյալ կետի համար սահմանված գների և բազիսային կոնցիցիենտների հիման վրա, ավելացնելով 8-րդ կետում նախատեսված, փաստորեն վճարված լրացուցիչ գումարները։

Այդ գների վրա ավելացվում են նաև տեսակա-

կան և վերապրիր ծախսերը ու կոմբինատ վարձատրությունը, համաձայն սույն հրահանգի 5-րդ հոդվածի:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Այն շրջաններում, որտեղ ապրանավարձի ընդունելը հանձնված և կոոպերացիային, Սոյուզպիլերը պիտի ունենա իր շրջանային հսկիչները, որոնք հանձնում են ձեռնարկությունների տերերին և կապալառուներին ծանուցագրերը և հսկում են ապրանավարձի հավաքման աշխատանքների վրա:

Այդ կարգը չի տարածվում 9-րդ կետի ծանոթության մեջ նախատեսված շրջանների վրա, որտեղ շրջանային հսկիչների ինստիտուտը կազմակերպվում և համապատասխան կոոպերատիվ կամ պետական կազմակերպությունների կողմից:

20. Ապրանավարձ հանձնելին ընդունման կացանը տպիս և անդրադարձ, որի մեջ ցույց և տրվում հանձնված ապրանավարձի քանակը, կուպոնները և նրանց որակը ու հանձնվող ձեռնարկության անունը: Հատուկ անդրադարձերի բացակայության դեպքում թույլատրվում և տալ սթեքների սովորական անդրադարձերից, սակայն այս դեպքում անդրադարձերի վրա պիտի դնել «Ապրանավարձ» շտամպը:

21. Շրջ-հսկիչը իր հետազոտությունների և ընդունման կացաններից, անպարտաճանաչ ապրանավարձ հանձնողների մասին ստացված տեղեկությունների հիման վրա, հսկում և ձեռնարկությունների տերերի և կապալառուների կողմից ապրանավարձը հանձնելու մասին իրենց վրա դրված պարտավորությունների ճշգրիտ կատարելու վրա:

Աղունավարձի հանձնման ժամկետը խախտելու կամ աղունավարձը սահմանված ժամկետից 10 որ հետո չհանձնելու դեպքում, շրջանային հսկիչը անձամբ կամ գյուղխորհուրդների միջոցով, կամ իր կողմից լիազորված անձանց միջոցով կազմում և արձանագրություն տվյալ ձեռնարկության կողմից աղունավարձի կանոնները խախտելու մասին։

Ցեղած ամբողջ նյութը, արձանագրության հետ միասին, շրջանային հսկիչը պարտավոր է ներկայացնել համապատասխան մարզային առևտրական բաժնին՝ նախատեսված սանկցիան գործադրելու համար։

22. Անկախ 21-րդ կետով նախատեսված աղունավարձի հանձնման վրա հսկողության կարգից գյուղական, չքավորութ. կազմակերպությունները և գյուղխորհուրդները ունենում են մշտական և անմիջական հսկողություն աղունավարձի հավաքման գործի վրա։ Մասնավորապես այդ կազմակերպությունները պարբերաբար ստուգում են ձեռնարկությունների տերերի և կապալառուների կողմից հանձնված աղունավարձի փաստաթղթերը, վորոշում են թե ինչ չափով են կատարում ձեռնարկությունների տերերը և կապալառուները նրանց վրա դրված աղունավարձը հանձնելու պարտականությունները, ստուգում են փաստորեն վերամշակվող հումքերի քանակը, նպատակ ունենալով պարզելու հանձնվելիք աղունավարձի վորոշված չափի ճիշտ լինելը, հսկում են վորպեսզի ձեռնարկությունների տերերը և կապալառուները աղունավարձը գանձեն սահմանված նորմաներով և այլն։

23. ՍԱՀՄ Առևտրի Կոմիտեները սահմանում և աղունավարձի տարեկան կոնտրոլ թվերը, ըստ առանձին հանրապետությունների։

Դաշնակից Հանրապետությունների Առևտրիները սահմանում են ամբողջ Հանրապետության մեջ մտնող ինքնավար Հանրապետությունների առանձին վիճակների (նահանգների) ցերկրների աղունավարձի տարեկան կոնտրոլ թվերը։

Ապայների և ձիթհան գործարանների քանակի, նրանց արտադրողական ունակության մասին ցեղած ավյալների հիման վրա, այլ և հաշվի առնելով առանձին մարզերի գյուղացիության կողմից ստացող հացահատիկների քանակը և բերքի դրության մասին ցեղած ավյալների հիման վրա, ցերկրային և վիճակային առևտրական բաժինները այդ կոնտրոլ թվերը բաժանում են ըստ առանձին մարզերի, իսկ մարզային առևտրական բաժինները կամ նրանց համապատասխանող կարգավորող մարմինները, ըստ առանձին շրջանների։

Մարզային առևտրական բաժինները հսկում են շրջաններում ձեռնարկությունների տերերի և կապալառուների կողմից տրվող աղունավարձի պարտավորությունների քանակի վրա, իսկ ցերկրային և վիճակային առևբաժինները՝ մարզերում տրվող պարտավորությունների քանակի վրա։ Դաշնակից Հանրապետությունների Առևտրիները հսկում են, վորպեսզի վիճակներում և ինքնավար հանրապետություններում ձեռնարկություններից պահանջվող աղունավարձը ապահովի կոնտրոլ թվերի իրագործումը։

24. Յելնելով ձեռնարկությունների տեսակների կապարատներից, ցերկրային և վիճակային առևտրական բաժինների կողմից պահանջվող ապունավարձի քանակից, դաշնակից հանրապետությունների Սովետները կազմում են ապունավարձի մուտքի ցերամսյա և միամսյա պլանային ցնցաղրությունները, ըստ կուլտուրաների։

25. Ցերամսյա և միամսյա պլանային ցնցաղրությունները, այլ և չպանձված ապունավարձի քանակի հիման վրա ՍԽՀՄ Սովետը, ամեն մեկ ամսվա համար տալիս և դաշնակից Հանրապետությունների Սովետներին, ապունավարձը հավաքելու մասին հատուկ հանձնարարություններ։

Դաշնակից Հանրապետությունների Սովետները բաժանելով այդ հանձնարարությունները, իրենց հերթին տալիս են այդպիսին առանձին ցերկրային և վիճակային առևտրաժիններին։

Ցերկրային և վիճակային առևտրական բաժինները կազմում են ցերամսյա և միամսյա պլանները, ըստ մարզերի և շրջանների։

## ՀԱՏՎԱԾ 3.

## ԱՊՈՒՆԱՎԱՐՁԻ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

26. ՈՒ.ՍԽՀ-ում և ՌՍՖԽՀ արտադրող շրջաններում, պանձվող ապունավարձի մի վորոշ մասը, վորը համաձայնեցնելով դաշնակից Հանրապետությունների Սովետների հետ, վորոշում և ՍԽՀՄ Սովետը, թողնվում և դյուղական չքավորության մատակարարելու համար։

Գանձված աղունավարձի մնացած մասը մեխանիկորեն մտնում է Սոյուզխլեբի կենտրոնացված պաշարների մեջ և ոգտագործվում է համաձայն ՍԽՀՄ Առևիկոմի սովորական կենտրոնացված պլանների։

ՌՍՖԽՀ ՈՒՍԽՀ Առևիկոմները, ամբողջ Հանրապետության համար, վերոհիշյալ կարգով բաց է թողնված աղունավարձի քանակի սահմաններում, վորոշում են թե ամեն մեկ շրջանին տեղական կարիքների համար այդ քանակից վորքան է հատնում։

ՌՍՖԽՀ սպառող շրջաններում և դաշնակից հանրապետություններում (վորոնք այս կետում թված չեն) հատիկային կուլտուրաների ամբողջ աղունավարձը ոգտագործվում է տեղական կարիքների համար, գլխավորապես գյուղական չքավորության մատակարարելու համար։

27. Իբրև աղունավարձ, ՌՍՖԽՀ և ՈՒՍԽՀ արտադրող բոլոր շրջաններում գանձված յուղասերմերը ամբողջովին մտնում են Սոյուզխլեբի կենտրոնացված ռեսուրսների մեջ և վերջինիս կողմից հանձնվում են Սինդիկատացված յուղարդյունաբերության, «Մասլոժիրսինդիկատ»-ի կամ նրա ֆիլիալների հետ կնքված գլխավոր պայմանագրերի հիման վրա։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—1. Փոխադրման ավելորդ ծախսերից խուսափելու համար, անմիջականորեն սինդիկատացված յուղարդյունաբերական գործարանները, իբրև աղունավարձ, հանձնված յուղասերմերը չեն հանձնում և Սոյուզխլեբին, սակայն այդ քանակը, վերջինիս կող-

մից մտցվում է աղունավարձի մուտքի հաշվի մեջ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. 2. ԲՍԽՀ, ԱՍՖԽՀ ՈՒՍԽՀ և Թուրք. ՍԽՀ ու ՌՍՖԽՀ սպառող շրջաններում, գանձված յուղասերմերի աղունավարձը ծախսվում է ըստ համապատասխան Հանրապետությունների Առեվկոմների ցուցմունքների։

28. Իրենց բերքի ամբողջ պրոդուկցիան հիմնական հացամթերող կազմակերպություններին հանձնող կամ իրենց պրոդուկցիան առևտրական բաժինների պլաններով իրացնող խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունների ձեռնարկությունների կողմից գանձված աղունավարձը, համապատասխան առևտրական բաժինների (վոչ ցածր վիճակային առբաժնից) թույլատվությամբ, կարելի է ոգտագործել նշած տնտեսությունների կարիքների համար։

Այդ աղունավարձի ծախսելու տեխնիկան կարգավորվում է հետևյալ կանոններով՝

ա) Աղունավարձը իրենց սեփական կարիքների համար ոգտագործելու իրավունք ունեցող խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունների ցուցակը կազմվում է յերկրային և վիճակային առևտրական բաժինների կողմից։

բ) Առանձին խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունների կողմից տարվա ընթացքում և ըստ ամիսների, ծախսվելիք աղունավարձի կոնկրետ քանակը, վորոշում են մարզային առևտրական բաժինները, (կամ դաշնակից Հանրապետությունների Առեվկոմնե-

.ի համապատասխան մարմինները), «Սախարտրեստ»-ի, Գյուղատնտեսների և կոլտնտեսությունների ներկայացուցիչների հետ միասին:

գ) Համաձայն հանձնված ծանուցագրերի, այդ խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունների ձեռնարկությունների հասանելիք ապրանավարձից, նրանց մոտ և թողնվում «ր» ցենթակետում հիշված քանակը, պահելու համար, ըստ փորում խորհրդային տնտեսությունների վարիչները և կոլեկտիվ տնտեսությունների նախագահները տալիս են Սոյուզիլերին ստացական ապրանավարձի այդ քանակը պահելու համար, իրենց կողմից ընդունելու մասին:

դ) Իրենց կարիքների համար խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունները-ապրանավարձը ծախսում են միմիայն Սոյուզիլերի մարդային կամ նահանգային բաժինների (կամ ընդունման կայանների) նարդագրով:

ե) Խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունների մոտ թողած ապրանավարձի արժեքը Սոյուզիլերը չի վճարում:

զ) Խորհրդային և կոլեկտիվ տնտեսություններին պատկանող ձեռնարկությունների կողմից գանձված ապրանավարձը Սոյուզիլերը մուտք և գրում և ծախսելու համար նարդագիր տալուց, համապատասխան քանակով գրում և ցելք:

29. Տեղական կարիքների համար ապրանավարձը ծախսվում և ըստ տեսուչական բաժինների պլանների և անպայման համաձայն Սոյուզիլերի կողմից տրված

նաբյաղների։ Մարզային առևտրական բաժիններին, անհրաժեշտության դեպքում, իրավունք և վերապահվում, տեղական կարիքների համար բաց թողնված ապրանքները փոխադրել մեկ շրջանից մյուս շրջան, իսկ կենտրոնական, վիճակային և Հանրապետական առևտրական բաժիններին՝ մեկ մարզից մյուս մարզ։

30. Առանց Սովետների թույլտվության, ապրանքները գանձող ընդունման կայանների-ագենտների և ձիթհան գործարանների կողմից ապրանքների ծախսելը արգելվում է և չեթե նման դեպք տեղի ունենա, այդպիսին համարվում է ապօրինի։ Նմանապես չի թույլատրվում ձեռնարկություններին վերջել թե կենտրոնացված ռեսուրսներին և տեղական կարիքների համար վերքան ապրանք և հատկացվում։

31. Իրրև կանոն, գյուղական չքավորության մատակարարելու նպատակով թողնված ապրանքը չպիտի ծախվի աշնան և ամառվա ամիսներին և պիտի կուտակվի գարնան համար։ Ապրանքների ծախման շրջան սահմանվում է չերկրային և վիճակային առևտրական բաժինների հատուկ վերջմամբ։

32. Տեղական կարիքների համար թողնված, ըստ մարզերի, ապրանքները ծախսելու տարեկան և ամսական պլանները կազմում են դաշնակից Հանրապետությունների առևտրումները, չերկրային և վիճակային առևտրական բաժինները, իսկ ըստ շրջանների՝-մարզային առևտրական բաժինները։

Շրջանային գործկոմները, ավելի շրջանի պլանի սահմաններում, ապրանքների հաշվին մատակարար-

վող սպառողների թվի հիման վրա, վորոշում են առանձին գյուղխորհուրդների կողմից ընդգրկվող տերրիտորիայի ամսական ծախսը։

33. Գյուղերում և այլ բնակելի վայրերում «Փոկ»-երին կամ գյուղական չքավորության կազմակերպություններին կից, կազմակերպվում են հատուկ հանձնաժողովներ, «Փոկ»-ի, գյուղական չքավորության, սպառողական ընկերության և գյուղխորհուրդների ներկայացուցիչներից, վորոնք կազմում են Շրջգործկոմի կողմից տրամադրված աղունավարձից հաց ստացող քաղաքացիների ցուցակները։ Նույն հանձնաժողովները, յելնելով տվյալ ամսվա համար Շրջգործկոմի կողմից բաց թողած հացի քանակից, սահմանում են ամեն մեկ սպառողին բաց թողնվելիք հացի նորմաները։

34. Առևտրական բաժինների կողմից գյուղական չքավորության կարիքները բավարարելու համար հատկացված աղունավարձը, հիմնական հավաքողի նարյադներով, (վորոնք տրվում են առևտրաժինների պլանների հիման վրա) հանձնվում են այն տնտեսավարական կազմակերպություններին վորոնց վրա առանձին կետերում, ստորին խորհրդային մարմինների կողմից, դրված է պարտականություն բաշխել գյուղական չքավորության աղունավարձը։

35. Սոյուզխլեբը և նրա հանձնարարությամբ աշխատող կազմակերպությունները, գյուղական չքավորության մատակարարելու համար հացահատիկները բաց են թողնում հետևյալ հիմունքներով՝

## ՌՍՖԽԶ ՅԵՎ ՈՒՍԽԶ ԱՐՏԱԴՐՈՂ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

*ա) Հացահատիկները բաց են թողնվում մթերման կոնվենցիոն գնելով, ավելացնելով դրանց վրա փաստորեն վճարված լրացուցիչ արժեքը և այդ հացահատիկի իրացման հետ կապված հարկերի և այլ գանձումների ծածկելու համար կատարած ծախսերը։ Յեթե գյուղական չքավորության մատակարարելու համար հատկացված ալյուսավարձը, կարգավորող մարմինների կարգադրությամբ փոխարինված և ընդունման վայրերից մի այլ վայր, այդ դեպքում բաց թողնման գների վրա ավելացվում և փոխադրման փաստացի ծախսերը։*

*բ) Գյուղական չքավորության հացահատիկի փոխարեն ալյուր բաց թողնելու դեպքում, պիտի հաշվի առնել ալալու վարձը և ալալու ժամանակ առաջ եկող պակասորդը։*

## ՌՍՖԽԶ, ԲՍԽԶ, ԱՍՖԽԶ, ՈՒՋՍԽԶ ՅԵՎ ԹՈՒՐՔՍԽԶ ՍՊԱՌՈՂ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ՝

*Գյուղական չքավորության հացամթերքները (հացահատիկ և ալյուր) բաց են թողնվում, տվյալ կետի համար սահմանված վաճառքի գներով։*

## ՀԱՏՎԱԾ 4.

## ԱՂՈՒՆԱՎԱՐՁԻ ՀԱՎԱՔՄԱՆ ՈՊԵՐԱՑԻԱՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

*36. Սոյուզխլեբի ալյուսավարձի ոպերացիաների ֆինանսավորումը կատարվում է հացամթերքների առևտրի ֆինանսավորման սովորական կարգով։*

37. Սոյուզխլեբի հանձնարարությամբ աշխատող կազմակերպությունների ընդունման կայանների, աղունավարձի արժեքի հատուցման ոպերացիաները՝ ֆինանսավորում են Սոյուզխլեբի կողմից, ավանսի կարգով, ի հաշիվ իր վարկերի։

38. Հանձնվելիք աղունավարձի դիմաց ձեռնարկությունները ավանս տալը կատեգորիկ կերպով արգելվում է։

Այն ժամանակաշրջաններում, երբ ճանապարհները խանգարված են լինում, Սոյուզխլեբը կամ նրա հանձնարարությամբ աշխատող կազմակերպությունների ընդունման կայանները կարող են պետական և կոոպերատիվ ձեռնարկություններին տալ ավանս, մոտավորապես ամիսների ընթացքում հանձնվելիք աղունավարձի արժեքի 50%-ի չափով, ըստ վորում ավանս տալուց, հետո, առաջին նվազ աղունավարձը հանձնելիս, ձեռնարկության հաստանելիք գումարից պահում է տրված ավանսը։

39. Աղունավարձի իրացման ոպերացիաների ֆինանսավորումը կատարվում է ընդհանուր հիմունքներով, սպառողական կոոպերացիայի վարկավորման համար սահմանված կարգով։

## ՀԱՅՎԱԾ 5.

## ԱՂՈՒՆԱՎԱՐՁԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ԴԱՐՁՐԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԱ-ՎԵՐԱԴԻՐ ԾԱԽՍԵՐԻ ՅԵՎ ԿՈՄԻՍԻՈՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ

*40. Աղացներից և ձիթհան գործարաններից աղունավարձը ընդունող կայանների վերադիր և այլ նման ծախսերի չափը, հավասարեցվում են, 1929-1930 թ. հացամթերման կամպանիայի ընթացքում այդ կայանների, մթերման աշխատանքների համար սահմանված շրջանային նորմաներին. իսկ առևտրական ծախսերը, 1929/30 թ. հացամթերման ընթացքում այդ կայանների մթերման աշխատանքների համար սահմանված նորմաների 60%-ի չափով։*

*41 Սոյուզխլեբը պարտավոր է հատուցել ընդունման կայանների կողմից աղունավարձի ընդունելու և Սոյուզխլեբին կամ նաբյադներով այդպիսին հանձնելու հետ կապված ծախսերը լրիվ, 40-րդ կետում նշված չափերով։*

*42. Վերադիր և ուղեկցող ծախսերը հատուցելիս հաշվարկումը կատարվում է ըստ այն հոդվածների, որոնք փաստորեն գոյություն ունեն ընդունման կայանում, և հաշվի չի առնվում.*

*ա) Ընդունման կայանի գտնված վայրը (կայարանին կից և թե վոչ).*

*բ) Հավաքած աղունավարձի դանձման վայրը և*

գ) Ֆինանսավորում և հիմնական հավաքող ընդունման կայանը և մատակարարում և նրան փաթեթ թև վոչ։ Այդ պայմաններից յելնելով, վերադիր և ուղեկցող ծախսերի այս կամ այն հոդվածի հաշվի չառնելը, (այդպիսիք հատուցելու ժամանակ), պիտի կատարվի այն կանոնների հիման վրա, վորոնք սահմանված կլինեն 1929/30 կամպանիայի ընթացքում կոոպերացիայի կողմից կոմխոզ հիմունքներով կատարվելիք մթերումների հետ կապված նույնանման ծախսերի հատուցման նկատմամբ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այն դեպքերում, յերբ ապունավարձի ընդունելությունը կատարվում և կայարաններից հեռու կետերում, վորտեղ գոյություն ունեցող մթերման գները ավելացրած փոխադրման փաստացի ծախսերը, ավել կլինեն կայարաններին և նավահանգիստներին կից գտնվող կետերի կոնվենցիոն գներից, Սոյուզխլեբը ապունավարձը ընդունող կազմակերպություններին հետ հաշվարկումը կատարում և այն համաձայնացրած գներով, վորոնք գոյություն ունեն այն կետում վորտեղ հավաքված և ապունավարձը, ավելացնելով դրա վրա փոխադրման փաստացի ծախսերը։

43. Ընդունման կայաններին Սոյուզխլեբը կոմխոզ վարձատրությունը վճարում և այն մինիմումի չափով, վորը սահմանված կլինի կոոպերացիայի ստորին ցանցի համար, 1929/30 թ. ընթացքում նրա կողմից կատարվելիք հացամթերման աշխատանքների համար։

44. Այն կազմակերպություններն, որոնց համաձայն 9-րդ կետի ծանոթության հանձնարարված և ինչպես աղունավարձի հավաքելը, այնպես էլ այդպիսինի ընդունելը (շրջանային հսկիչների ինստիտուտի կազմակերպելը, առանձին ձեռնարկությունների կողմից հանձնվելիք աղունավարձի մինիմալ չափի վորոշելը) Սոյուզխլեբը վոչ մի կոմիսիոն վարձատրություն չի վճարում, և նրանց առևտրա-վերադիր ծախսերը չի հատուցում։ Այդ կազմակերպությունները իրենց ծախսերը ծածկում են աղունավարձը վաճառքի գնելով իրացնելով։

## ՀԱՏՎԱԾ 6.

45. Աղունավարձի կանոնները խախտելու համար գործադրվում են Քրեական և վարչական սանկցիաներ։

Այդ սանկցիաները վորոշվում են դաշնակից Հանրապետությունների կառավարությունները և գործադրվում են այդ կառավարությունների կողմից սահմանված կարգով։

47. 45-րդ կետում հիշված սանկցիաների գործադրելը, չի ազատում ձեռնարկությունների աերներին և կապալառուներին աղունավարձը հանձնելու պարտականությունից։

47. Չհանձնված աղունավարձը գանձվում և անվիճելի կարգով, առանց դատական մարմիններին դիմելու և գանձումը հանձնարարվում և անմիջականորեն գործադիր մարմիններին, հարկերի և պարտադիր

գանձումների, հարկադիր կերպով, սահմանված կարգով գանձելու համար։

48. Այն դեպքերում, երբ մասնավոր աղբյուրների տերերից և կապալառուներից աղունավարձը գանձելիս պարզվի, որ այդպիսին չկա, այդ ձեռնարկությունների տերերը և կապալառուները տուգանվում են, համաձայն համապատասխան դաշնակից Հանրապետության օրենսդրության։

Տուգանքի չափը վերջնական է յուրաքանչյուր չհանձնված աղունավարձի չափից և դրա հետ կապված պայմաններից։

Տուգանքը գանձվում է վարչական մարմինների կողմից տուգանվածներից, այդպիսին գանձելու համար սահմանված կարգով։

## ՀԱՏՎԱԾ 7.

49. Աղունավարձի հաշվեկշռությունը տարվում և հայտամթերքների առևտրով զբաղվող կազմակերպությունների, 1929/30 թ. համար սահմանված ձևերով և կարգով, որը հաստատված է ՍԽՀՄ Ս. ռևվկոմի կողմից 1929 թ. հուլիսի 7-ին։

50. Դաշնակից Հանրապետությունների Ռևկոմները, յուրաքանչյուր Դաշնակից Հանրապետությունների կառավարությունների որոշումից, հրատարակում են հրահանգչական ցուցումներ, Աղունավարձի նորմաների, ծանուցագրերի բաշխման կարգի և աղունավարձի կանոնները խախտելու համար սանկցիաները գործադրելու կարգի մասին։

Սույն հրահանգը գործում է ՍԽՀՄ ամբողջ տերիտորիայի վրա, ըստ վերում ՌՍՖԽՀ տերիտորիայի վրա գործում է ՌՍՖԽՀ Առևվկոմի հրահանգը, որը համաձայնեցված է ՍԽՀՄ Առևկոմի հրահանգի հետ և լրացված է ապունավաբձի կանոնները խախտելու համար սանկցիաների գործադրելու կարգի մասին հատվածով։

**ՍԽՀՄ Առևվկոմի կոլեգիայի անդամ**
**(ՉԵՐՆՈՎ)**

**ՖԻՆ-տնտես. վարչության պետի տեղակալ**
**(ՇՈՍՏԱԿ)**

# ՎՈՐՈՇՈՒՄ

## Ա. Ս. Ֆ. Խ. Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

## ԱՂՈՒՆԱՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ

*Համամիութենական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1928 թ. հուլիսի 17-ի վորոշման հիման վրա և ի վերացումն ԱՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1928 թ. նոյեմբերի 27-ի աղունավարձի մասին Անդրկովկասի Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը ԱՍՖԽՀ վորոշում են.*

*1. ԱՍՖԽՀ սահմաններում գտնվող բոլոր պետական, կոոպերատիվ, մասնատիրական և հասարակական տաղցներում և դինդերում անկախ նրանց սարքավորումից արտադրողականությունից, աղունավարձը գանձել բացառապես բնանյութով—հացահատիկով։*

*2. Աղունավարձի գանձման աշխատանքները ղեկավարում և կարգավորում է Անդրատեսության ժողկոմատը, համաձայն Միութենական Արտաքին և Ներքին Առևտրի ժողկոմատի հրահանգների։*

*3. ԱՍՖԽՀ Առևտրական ժողկոմատին իրավունք է վերապահվում Միութենական Արտաքին և Ներքին Առևտրի ժողկոմատի դիրեկտիվների հիման վրա առանձին պետական հիմնարկություններին և ձեռնար-*

կությունները, կոոպերատիվ և հասարակական կազմակերպություններին ապառել աղունավարձը հաշտհատկով հանձնելու պարտականության փոխարինելով այն դրամով.

4. Աղունավարձը գանձելու համար սահմանվում և հետևյալ նորմաները՝

ա) Մեկ ցենտներ ցորեն ալալու համար $6^1/_4$ կիլոգրամ.

բ) Մեկ ցենտներ չալթուկ մաքրելու համար $7^1/_2$ կիլոգրամ.

գ) Մեկ ցենտներ գաբի ու այլ կուլտուրաներ աղալու համար — 10 կիլոգրամ։

6. Աղացատերերը և վարձակալները պարտավոր են գանձված աղունավարձի ամբողջ քանակը հանձնել «Սոյուզխլեբ»-ի բաժնետիրական ընկերությանը ԱՍՖԽՀ Առևտրական ժողկոմատի կողմից սահմանված գներով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ։ — Այն վայրերում, որտեղ «Սոյուզխլեբ»-ը չունի իր հացամթերման ապարատը, աղունավարձը հանձնվում է այն կոոպերատիվ, պետական և հասարակական կազմակերպություններին, որոնց հետ «Սոյուզխլեբը» պայման և կնքում։

6. Աղունավարձը գանձելու և պահելու համար կոոպերատիվ, հասարակական և պետական կազմակերպությունների ու հիմնարկությունների կողմից կատարված ծախսերը և կոմիսիոն վարձատրությունը հատուցվում են ԱՍՖԽՀ Առևտրական ժողկոմատի

կողմից համաձայն Միութենական Արտաքին և Ներքին Ժողկոմատի հրահանգների հիման վրա սահմանված կարգով և չափերով։

7. «Սոցպվերը» բաժնետիրական ընկերությունը համաձայնեցրած համապատասխան գործիքների (գայլա, թեմի և գավառակ), իսկ այն վայրերում, որտեղ անց և կացրված շրջանացում շրջգործիքների հետ միասին սահմանում և դյուրատեսակաև տարվա ընթացքում ամեն մեկ ապայից գանձվելիք ապունավարձի նվազագույն չափը, որի մասին յուրաքանչյուր ապայատիրոջ և վարձակալին հատուկ ծանուցագիր և ուղարկում, ցույց տալով կուլտուրաները և հանձնման ժամկետները։

8. Ապայատերերը և վարձակալները 7-րդ հոդվածում հիշված ծանուցագիրն ստանալուց հետո չորս շաբաթվա ընթացքում կարող են գանգատ տալ համապատասխան գավգործիքներին երենցից պահանջվող ապունավարձի չափի դեմ. գանգատ տալը ապայատերերին և վարձակալներին չի ազատում ապունավարձը հանձնելու պարտականություններից, եթե այդ մասին հատուկ որոշում կամ կարգադրություն չլինի այն մարմնի կողմից, որին տրված է գանգատը։

9. Ապունավարձը որոշված կուլտուրաներով և սահմանված չափով ու նշանակված ժամկետներին չհանձնելու դեպքում համապատասխան գործիքների կարգադրությամբ այդպիսին գանձվում է անվիճելի կարգով, բռնությամբ։

10. Ազունավարձի գանձման և հանձնման կանոնները խախտելու համար սահմանվում է հետևյալ պատասխանատվությունը.

ա) Այն դեպքում, երբ անվիճելի կարգով ազունավարձը գանձելիս պարզվում է, որ մասնավոր ապրանքների և վարձակալների մոտ համապատասխան քանակությամբ հաշվառիկ չկա, ապրանքներից և վարձակալներից համապատասխան (դավառային) գործակալների կարգադրությամբ անվիճելի կարգով գանձվում է դրամական տուգանք հասանելիք ազունավարձի արժեքի կրկնապատիկից վոչ պակաս և հնգապատիկից վոչ ավելի չափով.

բ) Ազունավարձը գանձելու և հանձնելու կանոնների այլ խախտումների համար առաջին անգամ համապատասխան (դավառային) գործակալների կարգադրությամբ վարչական կարգով տուգանք մինչև 100 ռուբ., իսկ կրկնակի և չարամիտ խախտումների համար քրեական կարգով ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող հանրապետությունների քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով։

11. 1-ին հոդվածում հիշված պետական, կոոպերատիվ և այլ հիմնարկությունների պաշտոնյաներն ազունավարձը գանձելու, հանձնելու և պահելու կանոնները խախտելու համար ենթարկվում են պատասխանատվության ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող հանրապետության քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածների «պաշտոնական հանցանքների»։

12. Ազունավարձը չհանձնելու նպատակով ապրանքների կողմից չարամիտ կերպով ապրանքը փո-

կելու դեպքում, այդ մասնավոր ձեռնարկությունները դատարանի վորոշմամբ կարող են առնվել տերերից ԱՍՖԽՀկազմի մեջ մտնող հանրապետ. ընկերությունների համապատասխան որենսդրության (ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող հանրապետության քաղաք. որենսդրքի 1 հոդ.)։

13. Այս վորոշման 1-ին հոդվածում հիշված ապացույցերի վարձակալների կողմից ապունավարձը չհանձնելու կամ հանձնելուց խուսափելու նպատակով չարամիտ կերպով ապացույցները փակելու դեպքում, այդ անձանց հետ կնքված վարձակալական պայմանագրերը կարող են դատարանի վորոշմամբ չեղյալ համարվել — ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող հանրապետությունների համապատասխան որենսդրության։

14. Առաջարկել ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող հանրապետություններին համաձայնացնել իրենց որենսդրությունը սույն վորոշման հետ։

Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահ՝ Ս. ԿԱՍՅԱՆ

ԱՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ՝ Շ. ԵԼԻԱՎԱ

Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի քարտուղար՝ Ա. ՇԱՀՎԵՐԴՈՎ

Թիֆլիս քաղաք

2 սեպտեմբերի 1929 թ.

Հրատարակված է «Զարյա Վոստոկա»-յում, սեպտեմբերի 8-ին, 1929 թ.

ՀԱՅ ԳՐԱԴԱՐԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹ.
„ՍՈՅՈՒԶԽԼԵԲ"
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

# Ա Կ Տ

_____ 19 թ. _____ քաղաք / գյուղ _____

Հայ. Սոյուզխլեբի ՀՍԽՀ-ի բաժանմունքի _____
գլավուի լիազոր / հսկիչ _____ և _____

_____ ներկայությամբ կազմեցի սույնը այն մասին,
որ _____ շրջանի _____ գյուղի աղացատեր / կապալառու
_____ ը, _____ ամիսների համար պարտադրված
աղունավարձի _____ փութից մինչև որս մուծել է / չէ մուծել
_____ փութ, վորով խախտել է Հայկենտգործկոմի
և Ժողկոմխորհի հոկտեմբերի 5-ի վորոշման 10-րդ կետը։

Սոյուզխլեբի լիազոր / հսկիչ _____
Աղացատեր _____
Վկաներ _____
Աղացատիրոջ բացատրությունը _____
_____

Ստորագրություն

Սոյուզխլեբի լիազորի / հսկիչի յեզրակա

Ստորագրություն

_____ Գավգործկոմի

№ _____ «_____»

Սոյուզխլեբի տնտեսվ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0038930

[084]

A I / 4169